



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 8

— ՏԵ ՇԱԲԱԹ —

18 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

Կ. ՊՈԼՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱԹԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍՆՆ ՎԱԿԱՌԱՑՈՒՄ

ՍԼՆ ԲԼԵՆԿ ԺՍՄՍՑՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղարկուիւն ընէլ ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորէլուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին իւր քաղաքէն Եւրոպայի քաղաքները, Եւրոպայի քաղաքները, ուրկէ եղած յանձնարարութիւնը անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — Զենիթ ժամացոյցները Բաքիի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:

Հատը 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՆԵՆԵԱՆ

(Տ. ԱՎԱԴՐԱՆ) ՏՐԿՈՒՄ ՄԵԼԵՆԵՍԻ — باب عالی حاکمیه نومبر ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառասկի քիւ 52



Ձեռքի, սոփ ու ոսփի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԵԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարե լագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԵԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

ԲՆՐՍ.

(1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

(2. Գարաքէօյ, Թրամիլէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համաժ .

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՏԱՐ

Չարշը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզդուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱՆ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագրուի եւ Պահեսի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀՐԴԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագրուի եւ Պահեսի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք եւ
կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ եւ առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔԻԷՏԻ ԼԻՅՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ուլեանաք խան , թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս՝ կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազոր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԿԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 8

ՇԱԹԱԹ

18 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԻՆՉՊԵՍ ՅԱԶՈՂԵԼՈՒ Է

Անգլիոյ թողաւորին վիրաբուժապետ Սըր Ֆրետերիկ Թրիվզ՝ էպլըտընի Համալսարանին մէջ բանախօսութիւն մը ընելով հետեւեալ յայտարարութիւնները ըսաւ ա՛յն ասպարէզին վրայ, որուն փայլուն և յաջողակ զարգերէն մին է արգէն ինքը:

Քննութեան առնելով այն զանազան տարրերը՝ որոնք ամէն ասպարէզի մէջ յաջողութեան պայմանները կը թուին ըլլալ չատերուն համար, և մասնաւորեւ իր խօսքը բժշկական ասպարէզին, ըսաւ թէ առաջին պայման կ'ենթադրուին դրամը, ազդեցութիւնը և ընկերական դիրքը, բախտաւորութիւնը, և, ամէն բանէ վեր, հանճարը: Այս ենթադրեալ առաւելութիւններէն մէկուն պակասը կը պաղեցնէ եռանդը անոնց՝ որոնք յաջողութեան կը ձգտին, և ոմանց համար ալ պատրուակ կը դառնայ անհոգութեան

և ծուլութեան, և յաջողելու համար ըլլալիք փորձերը յուսահատական կը նկատուին:

Սըր Ֆրետերիկ Թրիվզ նախ դրամական տեսակէտը առնելով, առանց վարանելու ըսաւ թէ բոլոր մեծ ասպարէզներուն սկիզբը շատ քիչ անգամ պատահած է որ դրամը, — ըլլա՛յ շատ, ըլլայ չափաւոր — գտնուի իբրեւ յաջողութեան անհրաժեշտ տարրը, այլ ընդհակառակն դրամը շատ անգամ արգելք մը եղած է առողջ, յամառ և կորովի յառաջդիմութեան դրական, գիտական ասպարէզներուն մէջ: Պիտի ըսուի թէ դրամական կարողութիւն ունեցողները աւելի ի վիճակի են գիտական խուզարկութիւններու և քնննութիւններու հետամուտ ըլլալու, մինչդեռ հացին պէտքը կը պարտաւորէ նոր տոքթօրները կամ ուրիշ ասպարէզի հետեւողները աննշան գործե-

րու մէջ մտնել, ասդին անդին վազել
հացը ճարելու համար :

Սըր Ֆրետերիկ անհա այս գաղա-
փարին դէմ կ'ընդվզի աւելի, և կը
յայտարարէ թէ հացին ետեւէն վազե-
լու այդ պայքարը ապարդիւն վաստակ
մը չէ, և ընդհակառակն դիտած է որ
հարուստ մարդիկը և անոնց զաւակ-
ները փոխանակ դիտական քննութեանց
հետապնդելու՝ իրենց դրամական կա-
րողութիւնը կըսպառեն կամ իրենց
պարապոյ ժամերը յուժանաստ կը վատ-
նեն թղթախաղի մէջ կամ ձկնորսու-
թեան և ուրիշ զբօսանքներու անձնա-
տուր ըլլալով :

Միևնոյն կերպով ընկերային սկզբ-
նական դիրքն ալ հաշուի առնելու պա-
րագայ մը չէ, ա'յն մտօք թէ այդ
դիրքը միայն մարդս կը տանի իրական
յաջողութեան : Այսպէս մէջ ու է
ազդեցութիւն կամ ու է ընկերային
դիրք անարժան մարդ մը չի կրնար
արժանաւոր ընել, և անձեռնհաս մարդ
մը՝ կարող : Փորձերը շատ իսկ ապա-
ցուցած են այս ճշմարտութիւնը : Ազ-
քատի և միջակորեար դասակարգի զա-
ւակները՝ որոնց ծնողք չունին ենթադ-
րուած ընկերային բարձրութիւնը, հետ-
զհետէ կարեւոր դիրքերու հասած են
իրենց իսկ յամառ աշխատութեամբ,
հացի ետեւէն վազելու այն օրինակով
յարատեւութեամբ, որ յատկանիչն է
նկարագիր ունեցող մարդոց :

Գալով բախտաւորութեան, զոր կըր-
նանք շանս ալ անուանել, Սըր Ֆրե-
տերիկ թրիվզ այդ պատրուակը նկա-
տողութեան առնելու արժանի իսկ չի
համարիր, յայտարարելով թէ ի՞նչ է
միթէ բախտաւորութիւնը, ինք չի հա-
ւատար ատանկ բանի, մարդ բախտին

ետեւէն վազելու չէ, բախտը թանձրաց-
եալ առարկայ մը չէ բնաւ որուն յա-
ռէ մարդ իր աչքերը, և անոր հաս-
նելու համար մասնաւոր կամ բացառիկ
ճիգեր ընէ : Բուն բախտաւորութիւնը
կը կայանայ մարդոց իր ընդգրկած
առարկէրին վրայ թափած քրտինքին
մէջ, և անոր ճամբուն վրայ յառաջա-
նալու անվրէպ դիտաւորութիւններուն
մէջ : Այդպիսի բախտաւորութեան վը-
րայ յոյս դնող մարդը պիտի սպասէ
ու սպասէ մինչեւ որ անդամաւոր ըլ-
լայ :

Պաշտօնի մը մէջ յաջողութեան հա-
մար անհրաժեշտ են թաղրուած տար-
րերէն մին է նաեւ հանճարը, որուն
վրայ ոմանք շատ կը պնդեն, ըսելով
թէ առանց գերբնական կարողութեան
վայրապար է պայքարը :

Հանճարը իր հում կամ բնածին
վիճակին մէջ պէտք մը չէ բժշկական
արուեստին մէջ, և չենք ալ կրնար ը-
սել թէ անիկա մէկ կարկառուն նկա-
րագիրն է անոնց՝ որոնք ամենաբարձր
դիրքի ժամանած են այդ կոչումին
կամ ասպարէզին մէջ : Հանճարը բժշ-
կին կրնայ տալ արագաշարժութիւն,
գիւրթութեւթիւն, վայրկեանական ախ-
տաճանաչութիւն, բնագղումով ըմ-
բռնում հիւանդութեան, և ուրիշ
զարմանալի երեւոյթներ, որոնք սա-
կայն գործնականին մէջ աւելի շարժա-
քանի մը կը վերագրուին : Վիրաբոյժ
մը ամենափայլուն կը նկատուի, երբ
անիկա կը կոտրէ կը թափէ վայրկեանա-
բար, մինչ այդ փայլուն համարուած
յատկութիւնը անհա բուն թերութիւնն
է վիրաբոյժին : Հակառակութեան գիւ-
տէն առաջ Օքեռաթկոնի մը գլխաւոր
կարողութիւնը համարուած էր արա-

գութիւնը՝ ձեռքի վարպետութիւնը այն ատենները ամենայն ինչ նկատուած էր, և ցաւերը շուտ դադարեցնողն ալ հրաշագործ մը կը համարուէր: Բայց իրական դարմանումին վրայ ո՛չ ոք կը մտածէր, իրաւ, վիրաբոյժը կտրեց այդ մատը, զորօրինակ, բայց կտրելու էր վայն, և կամ կտրելէն վերջ յարակից գործողութիւնը պէտք եղածին պէս կատարեց: Ասոր վրայ խորհող չկար: Ի՞նչ ճարտար մարդ, մէկ վայրկեանի մէջ կտրեց թափեց, կոտրեց շինեց, փակցուց: Բայց հիմա վիրաբուժութեան մէջ յաջողութիւնը կը չափուի ոչ թէ գործողութեան տեսողութենէն, այլ իրական ապաքինման տեսողութենէն:

Ու է արուեստի կամ պաշտօնի ասպարէզին մէջ ահա դրամը, ընկերային դիրքը, բախտաւորութիւնը և հանճարը անտես ըլլալիք յատկութիւններ են, բայց ընդհակառակն ու է ասպարէզի մէջ իրական դիրք մը ձեռք բերելու համար պահանջուած յատկութիւններն են առողջութիւն, իր արհեստը բանեցնելու հմտութիւն, համակրելիութիւն և պարկեշտութիւն: Աշխատասիրութիւնը սակայն անհրաժեշտ պայմանն է բոլոր այն յատկութեանց, ինչպէս չենք կրնար ըմբռնել որ երկնաքարը կրնայ շարժիլ առանց հեղեղի կամ ջուրի հոսանքի մը: Բժշկութեան պատիւ բերող անհասականութիւնները բնաւ իրենց յաջողութեան պատրուակ ծառայեցուցած չեն ո՛չ հարստութիւնը, ո՛չ իրենց ընկերային դիրքը կամ բախտաւորութիւնը, և ոչ ալ երեւակայական շարժիչ ոյժ մը՝ զոր հանճար կ'անուանեն:

S.

ՊԱՐՁ ԻՍՍԻԵՐ

ՈՂՍԱՆՆԱ

Աս ո՛րչափ Ովսաննա եռաձայնին համար: Սիմոն Մերունիին օրը Ղալաթիոյ եկեղեցին գտնուող բոլոր բարեպաշտները հոգեւորապէս խանդավառեցան, եւ նոյն իսկ անոնցմէ ոմանց ժլատ քսակները բացուեցան: Յետոյ կարգը եկաւ լրագիրներուն, որոնք իրենց հիացումը յայտնեցին անպայման կերպով: Ասոնք ամէնը աղէկ: Բայց ինչ որ աններելի է, Ղալաթիոյ եկեղեցիին խնամակալութեան այն որոշումն էր, որուն համեմատ նոյն օրը պնակ պիտի չըջարեէր եկեղեցիին մէջ ի պատիւ եռաձայնին: Ս. Պատարագի ամէնէն հոգեյոյզ վայրկեաններուն պնակ կը պտտցուի, սեղանաւորի նուրբ հաշիւներ կ'ըլլան, հոգ չէ, բայց եռաձայնի ատեն պնակ չըջարեւրը պատշաճութեան հակառակ կը նկատուի: Այս հաշիւով, եռաձայնը աւելի նուիրական է եղեր Ղալաթիոյ եկեղեցիին խնամակալներուն համարքան Ս. Պատարագը: Եթէ այս որոշումը տրուած է որպէս զի հաւատացեալներուն հոգեկան տպաւորութիւնը չխռովի, միթէ արդար չէ՞ որ Ս. Պատարագի ատեն ալ այս տեսակէտը նկատի առնուի եւ սեղանաւորական ու դրամափոխական գործողութիւնները վերջ գտնեն, որպէս զի բարեպաշտ ժողովուրդը կարենայ մտամոխի հետեւիլ կրօնական սուրբ արարողութիւններուն:

ՍԻՄԷՈՆ

ԱՂԶԿԱՆ ՍԸ

ՅՈՐԾԱՏԵՏՐԷՆ

Ներողութիւն կը խնդրենք մեր ընթերցողներէն ակամայ խոստմնադանցութեան մը համար: Ինչպէս կը յիշէք, անցեալ անգամ խոստացած էի Էսաեան վարժարանի տղածայրեւթեան տպաւորութիւնները պատմել ձեզ: Բայց որովհետեւ երեքշաբթի օր եռաձայն երգեցողութիւն եղաւ Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ, բնական էր որ իբրեւ քրօնիկագիր պարտաւոր էի առաջնութիւն տալ

եռաձայնին, որուն ներկայ գտնուելու բարեբաղդութիւնն ունեցայ:

Քիչ մը կանուխ եկեղեցի գացած ըլլալով, յաջողեցայ դասին մէջ փոքր տեղ մը գրաւել, կարծելով թէ հոն պիտի կրնամ հանգիստ լսել բոլոր երգեցողութիւնները: Դժբաղդաբար հսկողութեան պակասին պատճառաւ, թաւանձեան գաղափարին հակառակորդ մը, որ նախապէս Բագոսի տաճարը այցելած էր, քովս կեցաւ, եւ իր բերնէն զազիր հոտ մը տարածեց դասին մէջ: Շնորհակալ եմ որ այս պարագան Մանգումէի յարգելի խմբագրապետին ուշադրութեան առարկայ եղած էր, եւ այս մասին դիտողութիւն ըրած էր Մանգումէի մէջ, միայն սխալ մը կար: Յարգելի Քասիմ չէր կրցած որոշել թէ ո՞ր դասակարգին կը պատկանիմ, եւ զիս իրր տիկին մը ներկայացուցած էր, մինչդեռ տակաւին մէկ քանի օր առաջ նշանուեցայ եւ հագիւ տարիէ մը մտադիր եմ տիկին ըլլալու: Բայց ինձմով չգրադիրք, այլ մեր տպաւորութիւնները եւ դիտողութիւնները յայտնենք եռաձայնի մասին:

Ամէնէն առաջ ըսեմ որ մեր ժողովուրդին բարեպաշտութեան նկատմամբ ըստածները, բոլորովին անհիմն են եղեր, որովհետեւ երեքարթի օրուան անօրինակ բազմութիւնը վճռական կերպով հաստատեց որ մեր համայնքին չափ բարեպաշտ համայնք մը զըծուար է գտնել, միայն թէ զայն հրապարակաւ եւ հոգեւորապէս խանդավառելու միջոցը գտնելու է:

Կիրակի օրեր մեր եկեղեցիներէն չատերուն մէջ գրեթէ մարդ չի գտնուիր եւ թաղ. Խորհուրդները բարեպաշտներ եկեղեցի բերել տալու համար պերճախօս քարոզիչներ կը փնտռէին: Հիմակ այլ եւս քարոզիչի պէտք չի մնար, եւ կը բաւէ միայն Չիլիկիրեանը եւ իր խումբը հրաւիրել եռաձայն երգեցողութեան համար, եւ պիտի տեսնուի որ խուռներամ բազմութիւն մը եկեղեցի պիտի փութայ եւ պնակները պիտի լեցնէ: Ահաւասիկ առաջարկ մը, զոր մեր թաղական Խորհուրդներուն ուշադրութեան կը յանձնեմ: Միայն խնդիր է գիտնալ որ Ղալաթիոյ եկեղեցիին Խնամակալութիւնը պիտի արտօնէ՞ որ իր երաժշտապետը ուրիշ եկեղեցիի մէջ եռաձայն երգեցողութիւն կա-

տարէ, չըլլալիք բան չէ, որովհետեւ ասոր օրինակները տեսնուած են:

Չէ՞ք յիշեր որ Կիլիկիոյ Կաթողիկոսին Պոլիս գտնուած ատենը Գատըգիւղի եկեղեցիին Թաղ. Խորհուրդը Կաթողիկէն փոխուեց Իւսկիւտարի նախորդ Թաղ. Խորհուրդէն, որ մերժեց: Երբ փայտեղէն կազմուած մը կը մերժուի ուրիշ եկեղեցիի մը համար, չի՞ կրնար ըլլալ որ Ղալաթիոյ Խնամակալներն ալ մերժեն փոխ տալիքնց երաժշտապետը իր սարօքն: Այս եռաձայնի խնդրոյն վրայ առիթ ունեցանք տեսակցելու ծանօթ երաժշտապետի մը Երմուզ էֆ. Գուլումճեանի հետ, որ ջերմ նախանձախնդիր կերեւայ մեր հարազատ եղանակներուն պահպանման եւ բոլորովին աւելորդ եւ նորամուտ սովորութիւն մը կը սեպէ եռաձայն երգեցողութիւնը: Թարգելի երաժշտապետը շատ իրաւամբ դիտել տուաւ որ ինք սկզբամբ հակառակ չէ եռաձայնին, զոր կարելի է գործածել զպրոցական երգերու համար, բայց Ս. Պատարագի արարողութեանց համար, ո՛չ:

Մենք կը կարծենք որ վերջ ի վերջոյ այս երաժշտապետին եւ իր համակարծիքներուն առարկութիւնները նկատի պիտի առնուին, եւ եռաձայնը միմիայն զպրոցներուն մէջ պիտի գործածուի, քանի որ գիտենք թէ մեր ժողովուրդը առաջին անգամ այսքան տաք վերաբերում մը ցոյց տալէ ետք եռաձայնին, պիտի լքանէ զայն, նախկին եղանակներուն դառնալու համար:

ԵԼԻՁ ՀԱՃԵԱՆ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գոհութեամբ կը շնորհակալուիմ, անցեալ Հիւնդաքի օր մեր շնորհալի աշխատակցուհի Օրիորդ Էլիզ Հաճեանի նշանախօսութիւնը տեղի ունեցած և Գեորգ ԿՓ. Տէր Յակոբեանի հետ:

Աւելորդ է մեր ընթերցողներուն ծանօթացնել Օրիորդ Էլիզ Հաճեանը, որուն յոյժաւոր անգնէր այնքան ախորժով կը կարդացուին իրենց շահեկանութեան պատճառաւ: Իսկ Գեորգ ԿՓ. Տ. Յակոբեան ծանօթ անուն մը ունի առեւտրական հրապարակին վրայ իր պարկեշտ գործառնութեամբ:

Խմբագրութիւնս ջերմապէս կը շնորհակալուի այս քարեքարակալ նշանախօսութիւնը, եւ երջանիկ միութիւն մը կը մաղթեմ երկու խօսեցեալներուն:

ՓՈԼՍՈՑ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՀԱՅ-ԼԵՋՈՒԻ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ

ԵՐԻՈՒԱՆԻ Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Նախ պիտի խօսինք լեզուներու ուսուցիչներուն վրայ:

Մեր ազգային վարժարաններուն մէջ դասախօսող Հայ լեզուի ուսուցիչներուն մէջ պատուոյ տեղ մը պէտք է տալ Երուանդ Տէր Անդրէասեանի, իբրեւ քաջ գրաբարագէտ ու լեզուագէտ դասախօս:

Տէր Անդրէասեան հայկաբանն է եւ կրօնուսույցը՝ Պէրպէրեան վարժարանին, ինչպէս նաեւ հայերէնի ուսուցիչը Սկիւտարի Ս. Խաչ եւ Գաւորգիի Արամեան դպրոցներուն:

Տէր Անդրէասեան չի յիշեր իր բուն դըպրոցական ուսանողի կեանքը, ու հետեւաբար իր դասատու ունեցած ըլլալը, միայն գիտնական Դուրեան Միհրանը, Եղիշէ վարդապետ ըլլալէն անմիջապէս վերջ երբ Պարտիզակ գնաց, Տէր Անդրէասեան օգնական ուսուցիչ էր իր գիւղին դպրոցը, ուր Դուրեանին օրով դպրոցին մէջ դաս տալէ աւելի դաս առնել սկսաւ:

Հազիւ 16 տարեկան էր այն ատեն, երբ «Մաղկաքաղ Հատուածը» վերնագրով գրական կտորներու հաւաքածոյ մը հրատարակեց, միեւնոյն ատեն կ'աշխատակցէր նաեւ Սիմօն Գալիմաճեանի խմբագրութեամբ Աշտնանի հրատարակած «Ընտանիք» անուն ընտանեկան հանդէսին:

Տէր Անդրէասեան ինքնազարգացման տիպար օրինակ մըն է, եւ կարծես թէ բնածին յատկութիւն մը ունի դիւրութեամբ օտար լեզուներ սորվելու:

Հիմայ, որ կը գտնուի իր կեանքի արդիւնաւոր չընանին մէջ, լեզուներու աղուոր պաշար մը արդէն մթերած է իր մէջ, համուտ է բացի հին ու նոր հայերէնէն, ուր անժխտելի է իր կարողութիւնը, Ֆրանսերէնի, Անգլիերէնի ու Գերմաներէնի: Պարտաճանաչ մարդ մըն է եւ խղճամիտ դասատու մը, որ յայտնի ճիգ կը թափէ իր բացատրութիւնները լաւ մը հասկցնելու սա-

ներուն: Դասարանին մէջ չա՛տ զգայուն է, երբ տեսնէ թէ ուսանողները անհոգ կը մընան, մէկէն ի մէկ իր բամբ ձայնին մէջ զգացում մը դնելով, կ'սկսի հին հայ լեզուին ճոխութեանց ու նրբութիւններուն վերայ ճառել խանդավից ու սրտառուչ կենսագրութիւններով: Իր ուղղութիւնը վերջին մանկավարժական դրութիւնը չէ, եւ չափէն քիչ մը աւելի լուրջ է դասարանին մէջ:

Իր կեանքին վրայ ակնարկ մը նետողը, պիտի գտնէ զայն ուշիմ, զգայուն ու մանաւանդ գործօն:

Յաւակնոտութիւնը ու չափազանցութիւնը իր վիշտը կը գրգռէ, բայց իր զգացումները չափազանց են մերթ: Կը սիրէ ճշմարտութիւնը եւ հազուադիւրս անկեղծութիւնով մը կը փայլի արդի լրագրութեան մէջ: Խմբագիր մըն է ինք, որուն մէջ կը փայլի ամենէն աւելի իր գործօն կեանքը, եւ որուն տասնամեակը կը լրանայ եթէ չենք սխալիր, քիչ ատենէն:

Իւթիւճեանի օրով հրատարակուող օրաթերթ «Մալիս» ով սկսած է իր գրական գործունէութիւնը, ու երկար ատեն «Բիւզանդիոն»ի ալ աշխատակցելէ վերջ, հիմայ մեր ժողովրդական եւ սիրուած հայաթերթին «Մանգոլուկ»ի մէջ խմբագրական կարեւոր ոյժ մըն է եւ մեծ ազդակը անոր ծաւալման, իր քաղաքական լուրերու խմբագրութեան մէջ ունեցած ճարտարութեամբ:

Ախորժով կը կարգացունի Տէր Անդրէասեանի գրութիւնները, Յիշենք անոնցմէ իր «Օրուան խնդիրները», ուր կը ներկայանայ մերթ իբր խիստ քննադատ մը, հարուածող չորս կողմ, ու մերթ օգտակար կարծիքներ կը յայտնէ Պատրիարքարանի խնդիրներու շուրջ, եւ կրօնական հարցերու նկատմամբ, որոնց մասին Տէր Անդրէասեանի ունեցած ձեռնհասութիւնը անժխտելի է:

Արմաշի Դպրեմանքին մէջ, բաւական ատեն ուսուցչութեան պաշտօն վարած է, մեր առաջին ուսեալ եկեղեցականութեան ուսանող եղած պահուն:

Վերջերս թարգմանած է նաեւ մեր շարականներէն մաս մը, որոնք աւելի մեծ կարեւորութիւն մը ստացան իրենց բնագիրներուն հետ դէմ դիմաց հրատարակութեամբ:

ԼԵՒՈՆ

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Գործերու անձրեւը Թայիթիի մեջ.

Թայիթիի Միբակուա դաշտը օդերեւու-
թաքանական եզական երեւոյթի մը թատր
հանդիսացեր է:

Ջինջ ու անամպ երկինքի մը տակ գոր-
տերու տեղատարափ անձրեւ մը ահ ու գողի
կը մատնէ Թայիթիի բնակիչները, որոնք
իրենց կեանքին մէջ այսպիսի բան մը ո՛չ
տեսած եւ ո՛չ ալ լսած էին: Տգէտ եւ ռա-
միկ ժողովուրդը, որ նմանօրինակ պարա-
գաներու մէջ արտառոց մեկնութիւններ տա-
լու սովորութիւնը ունի, հրաշքի եւ երկնային
պատուհասի վերագրեր է այդ բնական ե-
րեւոյթը: Սակայն գիտութիւնը, որուն հը-
րաշքը կամ գերբնականը գոյութիւն չունի,
խիստ պարզ մեկնութիւն մը կուտայ գոր-
տերու անձրեւին:

Ճահիճներու կամ ծանծաղուտ ջուրերու
մէջ ապրող գորտերը կամ երկակենցաղները,
ցամաքային ու ծովին փոթորիկներու ազդե-
ցութեան տակ, մթնոլորտի բարձր խաւե-
րուն մէջ բարձրանալով, հեռաւոր տեղուանք
կը քշուին, եւ ուրիշ միջավայրի մը մէջ կար-
կուտի պէս գետին կը թափին:

* *

Մարդս քանի՞ մազ ունի գլխուն վրայ.

Վիլսըն անունով Անգլիացի բժիշկ մը
գլխուն մազերուն միջին թիւը հաշուելու
աւարտինակ գաղափարը յղացեր է:

Մանրազնին քննութիւններով հաստա-
տեր է թէ 1 քառակուսի բթաչափի վրայ,
այսինքն 27 քառակուսի միլիմէթր տարա-
ծութեան մը մէջ, 1066 մազ կայ: Եւ ո-
րովհետեւ մարդկային գլխուն մակերեսը
միջին հաշուով 120 քառակուսի բթաչափ է,
ուրեմն մեր մազերուն թիւը 1066 x 120 է,
որ կ'ընէ 127920 թել մազ:

Բնական է թէ Տոբթօսին այս յայտա-
բարութիւնը կիսաթափ մազերու կամ ճա-
ղատ գլուխներուն համար չէ:

* *

Ճաքոնցի աստմնաբոյժը.

Ճաքոնցի աստմնաբոյժը իր բժամատին
եւ ցուցամատին օգնութեամբ ամենախո-

րարմատ ակռաներն անգամ դիւրութեամբ
կը հանէ: Այդ պարզ գործողութիւնը սա-
կայն մեծ ու երկարատեւ փորձառութեան
կը կարօտի: Եւ գիտէ՞ք ի՞նչ միջոցի կը դիմէ
ծայրագոյն Արեւելքի այդ ժողովուրդը ա-
տամնաբուժական արուեստին պահանջած
հմտութիւնը ստանալու համար:

Աչկերտ ատամնաբոյժը պէտք է երկար
ատեն ծաղայէ վարպետ ատամնաբոյժի մը
քով, եւ այդ ժամանակամիջոցին մէջ նախ
եւ առաջ սորվի կակուղ փայտի մէջ մտուած
մանրագամերը մատով դուրս հանել, ու յե-
տոյ, օր ըստ օրէ, աւելի կարծր փայտերու
վրայ փորձեր ընել, մինչեւ որ վերջապէս
կարգը կաշնեփայտին գայ, որուն մէջ ուժ-
գին կերպով հաստատուած գամ մը պէտք
է որ առանց դժուարութեան դուրս քաշէ:

Երբ աչկերտը ի վիճակի ըլլայ այս վեր-
ջին փորձը առանց մեծ ճիգի կամ զօրաւոր
ցնցումի կատարել, այն ատեն կարելի է
մարդկային ամէն ծնօտ անոր խնամոց
յանձնել:

Այս պայմաններուն մէջ, դիւրին է հե-
տեւցնել թէ պողպատէ ատամնաշարն անգամ
անկարող է դիմադրելու Ճաքոնցի ատամնա-
բոյժի մը գործողութեանց:

Ըստ այսմ, Ճաքոնցի քաջավարժ ատամ-
նահան մը կրնայ, 30 երկվարկեանի մէջ,
կէս-երկվեցեակ ակուայ քաշել, առանց ա-
մենափոքր դժուարութեան:

Avis aux amateurs !

ՀՐԱՉԵԱՑ ՏԵՐՈՍԿԻ

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Ք Ա Ս Ի Մ Ի

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

Ս. Գրիգոր Նարեկացիի այս հոգե-
շունչ մատեանը, որուն ամբողջութիւնը
գրաբար բնագիրէն հասկնալի ու մա-
քուր աշխարհաբարի մը թարգմանած է
Քասիմ, Մեծ Պահլի առթիւ կը յանձ-
նարարուի ամէն Հայ քրիստոնէի որ
գիտէ վայելք զգալ հոգեկան հաճոյք-
ներով: Կը ծախուի Մանգումեի խրմ-
բագրատունը մէկ արծաթ մէճիտ գի-
նով, գաւառներէ փօսթի ծախք չի պա-
հանջուիր. արտասահմանի 4.50 ֆր.:

ԳՐԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆԱԳԻՐՆԵՐ

(ՆԻՆԻ)

I

Յառաջաբան

Այն օրէն ի վեր որ «Մաղիկ» կրներու եւ օրիորդներու յանձնուեցաւ ուղղութեամբ (այս բառին թարգմանութեան իրաւունքը վերապահուած է) համար, ահա Նինի մը մէջտեղ ելաւ իր օրագիրովը (migraine) եւ շուշանի ու որթի հասակովը եւ գալարումներովը (առաւելութիւններ)։

Շատեր անշուշտ ինքզինքնին կը կրծեն չկրնալով կրծել սա Նինին։

Երկուր ատեն սպասեցինք որ ծանօթ գրադէտ մը ծանօթացնէ ընթերցողին սա ծանօթ-անծանօթ Նինին։

(Այս երկու նախադասութիւնները գրուած են հետեւողութեամբ նշանաւոր գրադէտ Ենովի Արմենի, «կեանք, կեանքի, կեանքը, կեանքին, կեանքով, կեանքում, եւայլն»)։

Բայց տեսնելով որ տեղէն շարժող չկայ, ահա այսօր մենք կը փութանք այդ թերին լրացնել։

Սակայն իբրեւ galant մարդ չորս ոտքով կը փութանք խոնարհիլ իր տիտան հասակին առջեւ։

II

Միջաբան

Նախ ըսենք թէ օրիորդ մըն է, բառին լայն, այսինքն երկայն առումով։

Ֆեմինիզմի կատաղի պաշտպան մըն է, անանկ որ եթէ օր մը ձեռքէն դայ ապահովաբար յաղթանդում էրիկ մը կ'ըլլայ։

Իգական անուններու վերջի «անոյշ»-ը չի սիրեր, իՍԿ «ՈՒՀԻ»-ն բնաւ երբեք։

Մականունէն ալ դո՛ւ չէ, որովհետեւ անոր վանկերուն հանած ճի՛ք ճի՛ք ձայնը ջիզերուն կը դալչի։

Ատեն մը աշխատակեցաւ «Լոյս»-ի, բայց անոր վարդապետանալուն ինք ալ չմայրապետացաւ, այլ ինքզինքը բոլորովին նուիրեց «Մաղիկ»-ին կանանչ ու թօշ մարդին։

Այսօր կրթական բարձր հաստատութեան մը մէջ մանուկները դաստիարակելու վսեմ պաշտօնին կոչուած է։

Ապահովագրողներու չափ հաճելի խօսակցութիւն մը, բարեգուհիի սրամտութիւններ եւ յաջող գրիչ մը ունի։

Իր գրական զուգի գործոցը, աւելորդ է ըսել, հանրածանօթ «ՕՐԱԳԻՐ»-ն է, ուր Այվապեան հայրը եւ Թօլայեան որդին ձրի բաղկաթու մը ունին ամէն շաբաթ օր, տեւական կերպով։

Օր. Նինի, որ բարձր իմացականութեամբ մը եւ մնացականութեամբ մը օժտուած է, մինչեւ այսօր չէ համոշուած սա իրողութեան թէ ամէն ծաղիկ իր փուշը ունի։

Գրած է ոտանաւորներ որոնք անտիպ կը մնան դժբախտաբար, եւ ուսումնասիրութիւններ՝ որոնք անշուշտ ի «ԼՈՅՍ» կ'ածուին։

Աննիւթ պարիկ մըն է ոտքերով, ճարտասան մը ձեռքերով եւ չըմանաւարտ մը գլուխով։

Գրական տիտղոսն է «սաղանդաւոր գրագիտուհի», «համակրելի աշխատակցուհի» մակդիրը՝ «ՀԱՅՈՒ ԿՆԻԿ»։

Եթէ երեկոյթի մը հրաւիրէք զինք, չէք զղար, որովհետեւ իբր պարի dirigeur մը մեծ արժանիք ունի։

Մարդ քաջքէլ չի սիրեր, թէեւ մարդկային թերութիւններ ձաղկելը առաջին պարտի մը կը համարի։

III

Վերջաբան

Այսչափը բաւ կը համարինք, յանձնարարելով կարգաւ յառաջիկայ չարթուան «Մաղիկ»-ը, ուր, իր օրագիրին մէջ անշուշտ պիտի հաճի օրիորդ Նինին հեղեղել, ծաղրել զիս։

Արդ, երբ Բերայի շիտակին վրայ տեսնէք օրիորդ մը որ անգլուհիի հասակով, ֆռանսուհիի ձեւերով, հելենուհիի հովով կը քալէ, որ ձեռքը ջութակի տուփ մը ունի, որ նիւթ փնտռող յողուածագրի մը պէս կը դիտէ չորս դին, որ հակառակ հովանոց չունենալուն մինչեւ երթալիք տեղը բնաւ չի թրջիր, եւ որ վերջապէս ձեր ուշը կը գրաւէ. հարիւրին հարիւր գիտցէք որ անիկա դեռ կենդանի է, որ «Մաղիկ»-ին տաղանդաւոր Նինին է։

Ճոեսութիւն գրական եղբայրս, օրիորդ Նինի։

Գ.

ԱՐՏԱԿ ԱՂԱՅԻՆ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

(Հետևողութեամբ Վ. Փափագեանի)

Երբէք չը կարողացայ ըլլալ ոչ համբաւաւոր գրագէտ մը, եւ ոչ ալ մեծանուն երգիծարան մը, հակառակ չորս հինգ տարի շարունակ Ա. Մ. Գարագաշեանի եւ Յ. Պարոնեանի ծառայելով, որոնց առաջնոյն միշտ սատէ խանգէ, իսկ երկրորդին՝ շաքարը քիչ խանգէ կապսպրէի, երբ անոնք յաճախակի կայցեղէին մեր դրատունը որ ի Զաքարիա լար, ուր ծառանիդ կը վարէի գրահաւաքի փափուկ պաշտօնը: Նաեւ չեմ կարծեր որ ասկէ վերջն ալ կարենամ ըլլալ հանրածանօթ զաւելտագիր մը, եւ կամ կրթիչ մը կանացի բարեբերու, ինչպէս է իմ ազնիւ բարեկամ Տիար Վ. Փափագեան, որուն համար ալ կ'ըսեն թէ՛ չլիկ գրականութեան մշակ մ'է:

Բայց եւ այնպէս ասոնք արգելք մը չեն կրնար ըլլալ ինձ, որ ես չի պատմեմ հետեւեալ իրական պատմութիւնը, որ կամիցի կարդասցէ, եւ որ ոչն կամիցի մի՛ կարդասցէ, զի ոչ քոյ զօն:

×

Ասկէ կէս դար ու աւելի տասը տարի առաջ ըյս աշխարհ տեսած էր Արտակ աղա Քուրուեան, որ իր տղայութեան ժամանակ հազիւ մէկ երկու տարի դպրոցի երես տեսած, մտած էր առեւտրական կեանքի մէջ, եւ իր գործունէութեամբ ու աշխատասիրութեամբ, այս օրուան օրս կլորիկ դրամագլխի մը եւ անծայրածիր վարկի մը տէր եղած էր, այնպէս որ երբ քէօշի պախալին կէս բերան մը ըսեր թէ՛ կէս օխա ֆասուլեա տուն տար, արդէն ֆասուլեան տունը եփելու վրայ էր, չը մոռնամ ըսելու թէ Արտակ աղա երբէք սովորութիւն չունէր զահրէի ու եէինթիի միւթալիք բաները մեծ քանակութեամբ գնելու, վասն զի մէկ մը մուկերուն կերցնելն կը վախնար, մէկ մ'ալ իբր հաշուագէտ մարդ, չէր ուզէր որ բաւական գումար մը պաթալ ըլլայ տանը մէկ անկիւնը, որուն տոկոսը կը կորսնցնէր, ամէն մարդ իրեն այն չափա-

զանց խնայասիրութեան համար՝ կծծի կ'ըսէին, բայց ինք այդ բառին նշանակութիւնն անգամ չէր գիտեր:

Ունէր կին մը, տիկին Բրար Քուրուեան, եւ զեղանի աղջիկ մը, օրիորդ Պայծառ Քուրուեան, որ իր կարգին մայր մը ըլլալու ամէն կատարելութեամբ պատրաստ կար ու կը մնար, սակայն Արտակ աղա բնաւ այդ մասին միտք չէր յոգնեցներ, վասն զի գիտեր թէ ինչ աւելորդ ծախքի դուռներ կը բացուին իր առջեւ, քանի որ ինք երբէք աւելորդ ծախք մը չէր ըրած կեանքին մէջ:

Բայց Օր. Քուրուեան գիտակ ըլլալով հանդերձ իր հօրը այս ընթացքին, ինք իր հաշուոյն արդէն իսկ սկսած ու բաւական առաջ տարած էր իր մտերմական յարաբերութիւնները ծակ կօշիկ ու անթուշակ երկրաչափ, եւ միշտ գրպանը քառորդէն չորս երեսուն փարայ պակաս բռնող Տիտոս Յամաքեանի հետ, որուն միակ իտէալն էր Արտակ աղային աղջկան հետ ամուսնանալ, ու աներ պապային մաղազային մէջ պաշտօն մը ստանձնել:

×

Բարեկենդանի չարաթ գիշերը սովորութիւն ունէին տօնել Արտակ աղային անուան տօնախմբութիւնը, ու Արտակ աղա գոհ էր որ մէկ ծախքով երկու դուռ մէկէն կը գոցէ, քանի որ բարեկենդանը արդէն իր աւելորդ ծախսերն ունի, հետեւաբար տարւոյն մինակ այս օրն էր որ Արտակ աղա կ'անէր անմիջապէս ինչ որ կապսպրէի տիկին Քուրուեան, ու այն ապսպրանքներէն դուրս նաեւ իր կողմէն ալ կ'աւելցընէր քաջը ութ բոլորնոց բոստրման, ու տուգինան 15նոց խուֆի սարտէլասին:

Շարաթ գիշեր ժամը երեքին արդէն տանը միսաֆիր օտասին իր բեռը առած էր, գրեթէ ամբողջ դուռ դրացի հաւաքուած էին ո'չ թէ միայն Արտակ աղան պատուելու, այլ մանաւանդ ասանկ գիշերով մը իրարմով ժամանակ անցնելու ու զբօսնելու համար: Սովորական ինչպէսէքի արարողութիւնը վերջացած էր ու պահ մը լուռութիւն կը տիրէր, երբ խօսք առաւ դրացի տիկին մը.

— Էյ հայտէ նայիմ ճահիլներ սանկ օյին

մը պան մը իճատ ըրէք տէ քիչ մը էլէն-
միշ ըլլանք, աս ասանկ չըլլար, բարկենդանք
է, մեղայ մենք ձեր չաղը էղած ատեննիս
հէյկիտի հէյ, մեղայ քի ասանկ կուռքի
պէս նստէինք. վարժապետ օյինի մի կըսես,
երեզիւք քիմտէ մի կըսես, ինչեր ինչեր:

Միւսիւ մը, որ իրր դրացի հրաւիրելոց
մէջ կը գտնուէր, խօսք առնելով,

— Սակայն տիկին, արդի զարգացեալ
ժամանակամիջոցիս այդ հնօրեայ խաղերը
երբէք հաճոյք չեն առթեր մեզ, եւ որոնք
բոլորովին մեղ համար չահեկանութենէ
զուրկ են:

— Քու քուղում Տիւրիկ հանրմ, զուն
կէնէ քիչ մը կըռաբարձա կը հասկընաս, ինչ
ըսաւ տա ճահիլը, Շահիկին զաւակն եմ ը-
սաւ, աղէկ մը չը հասկցայ ամա, կիտեմ
կոր քիմ մէկուն պիտի ըմանցունեմ տէյի,
աֆ կընես քուզում Արտակ աղա, պարէ
դուն էօն այախ էղի տէ օյին մը պան մը
հանէ օռթան, զէրէ ճահիլները սըխըմիշ
կըլլան կոր:

Եւ ճիշդ այս միջոցին դուռը կը վարնուի
ու դրսէն ձայն մը պը՛ռ պը՛ռ պը՛ռ:

Արտակ աղա իսկոյն փողոցի դուռը կը
վազէ, իսկ Օր. Քուրուեան կանխաւ գիտ-
նալով թէ՛ Միւսիւ Յամաքեան դիմակաւոր
պիտի պատուէր իրենց սուռաէն, կաղաչէ
իր մօրը որ մի գուցէ հայրը դիմակաւորները
չընդունելիք ընէ, եւ ահա տիկին Քուրու-
եանի միջամտութեամբ դիմակաւորները
սրդէն միսաֆիր օտասին խուժած են, Ար-
տակ աղա եւս բազմոցին անկիւնը կծկտած
հետաքրքիր նայուածքներով կուզէ ճանչնալ
թէ՛ ոյք, որոնք են սոքա արդեօք, հրա-
ւիրեալք առհասարակ ամէնքն ալ գոհ են
այս այցելուներէն, սենեակին մէջ ժխորը
սկսած է արդէն, ու դիմակաւորը հրաւիրե-
լոց հետ խառնուած սկսած են պարել, իրենց
հետ բերած նուագը զարնելով, Հնօրեայ տի-
կին մը քովի երկուքուկէս եռսուննոցին կը-
սէ,

— Ճանրմ Բուլանթի հանրմ, էյէր աս
մուլինաներն ալ չիգային նէ ինչ պիտի ը-
նէինք չիյտեմ, մեղայ աս ինչ նէքէս մարդ
է էղեր, սանկ չաղը մը չէ պուներ, մեզի

աստեղ վարպետ տուն տէյի տավէթ ըրաւ,
քիմ ծունկ բարեւ նստինք տէյի, չը հասնէի
չը կատարէի կալու հէմէն, քա վայ մէղքիս,
պարէ չունեւորս ըլլայ նէ, զապալը կէնճ,
աճապ ինչ կը քաչէ կոր ծառքէն, մեղայ օր
մը օրանց չը տեսայ քիմ սանկ թագէ ֆիս-
տան մը չընէ տէ տուրս մը հանէ, կիւնահ
չէ, կիւլ տամլասի ճահիլէկը, կիւյամ քի,
սըխը կը պունէ կոր, մըսի վրան:

— Հախ ունիս քուրուկ, ինտոր մոռնամ
ան իմ ողորմած հոգի կլխաւորս, անունի
օրը օր ըլլար նէ առջի իրիկուրնէ մէխանա-
յէն առջին ձըգած լավութա քէմէնչէն կառ-
նէր տուն կը պերէր, թախոր լուսեր էյլէն-
միշ կըլլայինք, հիմակ բիւթիւն ասանկ պա-
ները պարիթ էղաւ տէ էրածի պէս կուգայ
կոր:

Տիկին եւ Օր. Քուրուեան հիւրերը կը
պատուէին պարբերաբար քօնեակ, իքսիր,
եւլն. հրամցնելով, բայց եղաւ որ դիմակա-
ւորներէն մին ետին չի նայելով այնպէս մը
բաղխեցաւ օրիորդին որ ափսէն իյնալով
ձեռքէն կտոր կտոր եղաւ գաւաթները, ո-
րուն ի տես Արտակ աղա նստած տեղէն մէկ
կանգուն վեր ցատկեց:

— Քա վա՛յ աս ինչ ծուն էր թէփէիս էկաւ
սա նայէ բիւթիւն էթէկս պերպաւ էղաւ,
վայ նալէթ ըլլայ հէմէն, աս ասխըտար
տարուան ճէհէզիս ֆիստանը լըմցաւ:

Նոյն միջին Տիկին Քուրուեան խել մը
անուշ խօսքերով գործը անուշ տեղը կը
կապէ, ինչ ընենք եղաւ նէ եղաւ, չարեր-
նիս տանի ըսելով:

Միւսիւ Յամաքեան, որ միշտ միջոց մը
կը փնտռէր օրիորդին հետ առանձին տես-
նուելու, երբ տեսաւ թէ՛ դուրսը սօֆան
օրիորդը մինակ է, կամաց մը դուրս կնլայ
ու զայն գտնելով,

— Ո՛հ, պաշտելիս, մինչեւ երբ այսպէս
հալ ու մաշ կեանք մը պիտի անցունենք,
երբէք չէ եղած վայրկեան մը որ երեւա-
կայութեանս առջեւ չունենամ զքեզ, գիշերը
քեզ կերազեմ, ցորեկը քեզ կը մտածեմ, եւ
ահա այս պատճառաւ ո՛չ բանի եմ եւ ո՛չ
ալ գործի, դեռ անցեալ օր հօրեղորմէս
նամակ մը առի որ ինձ 15 ոսկի ամսակա-
նով պաշտօն մը գտած ըլլալը կը յայտնէր,


սակայն կարելի է ինձ միթէ քեզնէ հեռու ապրիլ, ուստի անմիջապէս մերժեցի:

— Ա՛հ, սիրեկա, չեմ գիտեր թէ ինչպէս ընեմ, մայրս համոզելը դիւրին է, սակայն հայրս ինչպէս որ գիտէք, շատ կոշտ մարդ մ'է, բնաւ խօսք չի հասկնար, ձգել բախշելէն ուրիշ ճամբայ չի կայ, կը մնայ միայն բաւական դրամ ձեռք անցնել:

Տուգինան 15նոց խութի սառուէլասին, որուն ծթոած եղն ալ պատառ թաթխելու համար սալցա եղած էր, ու գաւաթներու կոտորեւէն, աղեաց գալարում ու փորհարութիւն պատճառած ըլլալով, նոյն միջոցին Արտակ աղա արտաքնոցը կը գտնուէր, որուն դրան առջեւ կըլլար սոյն խօսակցութիւնը, առանց գիտնալու հոն իր ներկայութիւնը, եւ ահա Արտակ աղա կիսակապ ներքնաճերմակեղէնով դուրս կը ցատկէ ու կը խոյանայ ծամաքեանի վրայ, ու լաւ մը կը թռչէ զայն, որ հագիւ պրծելով ձեռքէն՝ կարող կըլլայ ինքզինքը փողոց նետել խուճապի մատնելով հրաւիրեալները, որոնք ալ կամաց կամաց կըծիկը կը քակեն, մէկ մալ այդ տունը ոտք չի կոխելու երգումներով:

Հետեւութիւն. — Երբ աղջիկ մը շատ սըխը բռնուի՝ քէօռ կապ կըլլայ՝ եւ երբ շատ թոյլ բռնուի՝ բոլորովին կը քաղուի, միջակը բռնեցէք:

ԵՐՄՈԳ



Աղջիկներէն ոմանք փողոցները պըտըտող շաքարավաճառներու պէս են, որք երբ կը նային թէ մեծերը առեւտուր չեն ըներ, տղաներու քով կը պտըտին, որպէս զի տղայներն տեսնեն շաքարը և ստիպեն իրենց մայրն անկէ դնելու:

×

Այն աղջիկն որ իրեն նայելուդ համար պատուհանը կը գոցէ՝ զայն քեզի բանալ տալով հաճոյք զգալու համար է:

×

Շատախօս կին մը անբերեկի տուրք մ'է դրուած ամուսնոյն վրայ:

ԲԺՇԿԻ ՄԸ ԿԱՌԻՆ ԾԱԽԲԸ

~~~~~

Բժիշկ մը կը կոչուի այս օրերս հիւանդ մը դարմանելու համար:

Բժիշկը իր պաշտօնը կը կատարէ և հիւանդին կեանքին վերջացած ըլլալը յայտնելէ վերջ մեկնած պահուն այցեգիրն ալ կուզուի:

Բժիշկը. — Ձեմ կրնար ընդունիլ, ես Ձեր ընտանիքին երախտապարտ մնալու պարտաւորուած եմ, Ձեր ընտանիքին պետէն բարեքներ տեսած եմ:

Տիկինը. — Բայց բարոյական օգնութիւնները ուրիշ, նիւթական աշխատութիւնը ուրիշ, այցեգիրն առէք, մեր բարեկամութիւնը նոյնն է դարձեալ:

Բժիշկը. — Ձեմ կրնար ընդունիլ, զիս անուանարկել կուզէք, կաղաչեմ կարելի չէ, մի պնդէք:

Այցեգիրն կը մնայ տիկնոջ ձեռքը և բժիշկը կը մեկնի, հիւանդն ալ հոգին կաւանդէ:

Կէս ժամ վերջ դուռը կը զարնուի և բժիշկին սպասաւորը այցետոմս մը կը յանձնէ այսպէս զրուած,

«Վասն ցաւակցութեան». — Աղիւտիկին, կառքի ծախք մէկ մէճիտ վճարեցէք»:

Իրենց վշտին մէջ շուարած տնեցիները աւելի կը շուարին այս այցետոմսին վրայ կը կարդան դարձեալ կը կարդան:

Եւ այս այն բժիշկն է որ այցեգիրն մերժեց անուանարկութենէ ազատ մնալու համար:



## ԱՆՑԵԱԼ ՇԱՐԱԹՐ

Բաւական դժուար խնդիր մը պիտի դառնար անշուշտ եթէ հարկ ըլլար հաշուել թէ վերջացող շարժումն մէջ քանի հոգիներ սուսուռի երթալով անքուն մնացին եւ քանիներ նոյն պատրուակաւ տունէն բացակայեցան պայօներուն աղտոտ օդը շնչելու:

— Մայրիկ ես այս գիշեր չպիտի գամ:

— Ինչո՞ւ գաւակս:

— Որովհետեւ մեր մաղազային սիրեկոնը սուսուռ պիտի տայ, զիս ալ հրաւիրեց:

— Աղէկ ամա տղաս, ատանկ շարժում տունէն հեռու մնալ կ'ըլլայ մի՞ ես:

— Ի՞նչ ընեմ մայրիկ, խօսքը չեմ կրօնար մերժեր:

Ու խեղճ մայրը կը հաւատայ, մինչդեռ տղան փոխանակ բարեկամի մը տունը երթալու, շտապ շունջը կ'առնէ Գօնգօրտիայի եւ կամ Օտէօնի սրահը, հաճոյքը վայելելու մատմազէլ Բոլտանսի եւ կամ մատամ Էլէնիի մը:

Տեսէք թէ ի՞նչ զոհողութիւններ ալ յանձն կ'առնէ:

Նախ կ'երթայ շտապ Լեւոն Գարամաճեանի խանութը, նոր օձիք մը գնելու ու կը ցնծայ 100 փարայ, յետոյ 20 փարայ կ'օշկենքը հայեկանման կերպով փայլեցնելու. 5 զրշ կամ 20 փարայ — ասիկա այնչափ յայտնի չ'է, մարդուն տեսակէն կախում ունի — կերակուրի, 40 փարայ պասսօն մը եւ պայօն մուտքը 5էն 10 զրշ. տեղւոյն սակին համեմատ:

Մեր մէջ պայօ գացողները մէկ դասակարգի մարդիկ չ'են միայն, շաբաթական 10 զրշ վաստկող խուշումնիին չըրախէն սկսեալ մինչեւ հարուստ դրամատէրներ կերթան հոն:

20-25 տարեկան քանի մը երիտասարդներ օր առաջուրնէ պատրաստուած կերթան Օտէօնի սրահը լաւ ժամանց մը անցնելու համար, որ՝ պարզուած գոյնզգոյն տեսարաններէն ու տիրող ծխորէն շուարած մէկ կողմ կը քաշուին ու պարողները կը դիտեն:

— Մօ, սա տիբէկին տակը կեցող աղջիկը նայէ ինչ աղուոր հագուեր է ...

— Հա պէ, աճապա էրթամ հետը մէյ մը խաղամ ...

— Հայտէ ծօ, բաջադ կապեր էս, քեզի պէս մարդիկը անիկա շէն կրնար տառցներ:

— Դուն անանկ կիտես, հիմա խաղամ տէ սէյրի ըրէ ...

Ու մօտենալով աղջկանը.

— Բօլքա մը խաղանք օրիորդ:

— Արթա ոսմէքա ալօ ղլօսա տէքսէվրօ ըսելով քովէն կը հօռանայ աղջիկը:

Տղան կը շուարի այս անահնկալ տեսարանէն, պաղ պաղ շուրեր կիջնան գլխէն վար եւ կը վերագառնայ ընկերներուն քովը որոնք կըսկսին քաշքշել:

— Էյ ըսելիք չկայ, խըյախ խաղացիք:

— Ձգէ պէ աղբար, լեզու չիյտէ կոր:

— Իրաւ էս աղբար, պարէմ մինչեւ գալ տարի տա լեզուն սորվինք տէ մահրում չի մնանք...

— Սա կեցողները հայ կը նմանին կոր, հիշ չեն անոնց քովը էրթանք...

— Մօ, մարերին քովերին է, չես տեսնար կոր, քեզի ույմիշ ըլլանք նէ, աս գիշեր ծեծ մը կուտենք մենք:

— Պարկեշտ մարդ էն նէ հոս ի՞նչ բան ունին, հայտէ ծօ, ատանկ ուրսէմ սէրսէմ կենանք նէ գործ մըն ալ չենք կրնար տեսնել, ինչ տէյի էկանք չիյտեմ քի, ասանկ տեղ էկողը վռնտուլին ալ աշկը պիտի առնէ ծեծն ալ...

— Քալեցէք նայինք, հէլպէթ բան մը գիտէ կոր, ըսելով ամէնքը մէկ կուղղուին դէպի այն կողմը:

— Քա աղջիկ, տա քովդ կեցող տղաքը ով էն քի հետերին կը խօրաթէք կոր...

— Ձիյտեմ մայրիկ, քիպար մարդիկներ կը նմանին կոր...

— Հիմա քեզի քիպար մը կը ցուցնեմ քի, "ըյրըլի շուներ, ատանկ օյինի էլլաք տէյի էրկու քուր շաբաթ մըն է քի կուլխուս միսը կէրաք պալօ էրթանք տէյի, ինծի նայեցէք դուք ալ միւսիներ, էս ձերին կիտցած կնիկներէն չեմ, չէ, պիլէ պիլէ իմ աղջիկներս ձեզի մէզէ չեմ ըներ, քաշուեցէք...:

— Ամօթ է մայրիկ սուս էղիր...

— Քա սըվօր նայէ, տահա կեցեր է աս նոնց թարաֆ կելլայ կոր...

Նոյն միջոցին գաւառացի սպասաւոր մը կը մօտենայ կնոջը ու պաշտօնագին ձեւով մը,

— Գուզում մայրիկ, վրաներնուդ աղէկ ֆամէլեա մը կերեւաք կոր, տա աղջկանդ մէկ հատը տուր տէ քիչ մը պտըտիմ, մէրաք մըներ չարուխ կը պերեմ:

Կինը բոլորովին կրակ կտրած,

— Առջիս ինկէք նայիմ քա րօստալներ ընելով աղջիկները դէպի տուն կ'առաջնորդէ, մինչ խումբով տղաքը կը հետեւին անոնց:

Արշալոյսը արդէն ծագելու վրայ էր, երբ տղաքը յուսահատ բաղնիք մը կը մտնեն քիչ մը հանգստանալու համար:

Մի զարմանաք, կը գտնուին մայրեր ալ որոնք իրենց աղջիկները կ'առաջնորդեն այդ տեսակ վայրեր:

Դիտուած պարագայ մը եթէ կայ այն է որ պալօ գացողները գրեթէ բոլորն ալ իրենց վատնած ԴՐԱՄԻՆ հետ շատ անգամ վրայ կուտան նաեւ իրենց ԱՌՈՂՋՈՒԹԻԻՆԸ ու ԱՐԺԱՆԻՔԸ:

ՆԵՐՇԱՊՈՒՋ

### ԿՆՈՋ ՄԸ ՆՈՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՐԱՅԿԱՆ ՊՃՆԵԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ

Խոստովանիմ եւ հաւատամ թէ՛ քանի մը ոսկի կտակելով (հոգ չէ թէ անոնք անվճար մնան) կամ քանի մը մէճիտ Ազգ. Հիւանդանոցին նուիրելով մարդս բարերար կը նկատուի:

Թապալքեար Ակնցի վարժապետին թոռն ալ ատենադպիր ըլլալով Թաղ. Խորհուրդի մը, եկեղեցւոյ պարտքը իր գիրքերով հաշուեփակ կընէ եւ երախտագիտութեան կ'արժանանայ:

Նոյնպէս ազգին դրամները կուլ տուող ագամանդակիր մատանին ցուցադրելու նըպատակով ակնոցը ստէպ շտկող անձեր ալ հարուստ հոշակուին, ինչպէս գիտնական երեւալու համար պատմութեան դասագիրք մը քննադատողները:

Պիտի չը խօսիմ անոնց վրայ՝ որոնք մազ մօրուքնին կը ներկեն 17 ամեայ աղջկան մը թեկնածու ըլլալու համար:

Եւ ոչ ալ անոնց վրայ՝ որոնք քուն չունեցողներուն ժէլինոյի օշարակը կը յանձնարարեն:

Եւ ոչ իսկ այն դիւցազնուհիներուն՝ որ Չղաւեան վարդապետներու գլուխը կը վիրաւորեն:

Այլ պիտի խօսիմ համեոտափայլ կնոջ մը նոր գիւտին, որ բարերար ազդեցութիւն ունեցած է երիտասարդի մը բարոյականին վրայ:

Բայց ինչպէս պիտի ամփոփեմ ըսելիքս, ո՛վ Մուսայ, որ Հանրագիտակի խմբագիրն ալ ներողամիտ ըլլայ, ցափոտութեան լաւ աչքով նայի, զուարճալիք գրողներն ալ ծուռ չը նային, միջակից չը նկատեն: Օ՛Ֆ, խօսքիս թելը կտրանցուցի . . .

• • •

Խմենք մեծագաւաթ անշաքար սուրճ մը, առնեմ նոր գրիչ մը, նոր ոճով սկսելու համար, միթէ՞ սա առաջին պայմանը չէ աղէկ գրելու Տիար Թօլայեան: Հասակէս անհունապէս մեծ եղող տարիքէս էջ մը ի գիր առնելու, անշուշտ մտիկ ընելու համար ընթերցողներն ալ պէտք է սիկառ մը եւ սուրճ մը խմեն:

Մինչեւ որ դուք խմել սկսիք, բոժոժը կախելու ահեղ վայրկեանը կը մօտենայ, եւ զիս կը տագնապեցնէ, պէտք է սկսիմ գըրել, բայց ո՛ւսկից սկսիմ եւ ո՛ւր վերջացնեմ, ընտրած նիւթս եօթնգլխեան ճիւղի մը պէս կը տագնապեցնէ կարճուկ մարճուկ մարմինս, եւ կը ճնչէ զիս, ո՛վ մուսայ, հասիր:

Կանցնի տագնապս, ինչպէս անցած են կարմիր երես պտուղներու եղանակը, խոչընդոտը վերցած է. կըսկսիմ գրել, ահա սկսայ:

Ո՛հ, սիրեցեալ եղբարք, կոշտ կնոջ մը հետ սիրաբանութիւն ընելու պէս աճողնի եւ անհեթեթ բան չի կայ:

Հապա ամուսին ունեցող կնոջ մը հետ սիրաբանութիւն ընելը վայելուչ բան է:

Ա՛հ, ո՛չ, եւ պէտք է ծնրադիր ըսենք, քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն տէր բարեգութ, արտասուելով եւ պաղատիմք զայս ասելով, ներէ, տէր ներէ, եւ մեր աչքերուն վտակները բանանք Հարաւային Ամերիկայի Ամազօն գետին չափ եւ հո-

աեցենք մեր արտասուքը, որպէս զի կա-  
կուղնայ եւ ուղղուի մոլորեալներու բարո-  
յականը:

Սիրելի Թօլայեան, տեսա՞ր մուսային  
կերած ապուրը, 140,000 տարեկան ընկե-  
րանաշաղաղ Սարգիս Փափազեան գերձա-  
կը պիլէ բանաստեղծ ըլլաւ:

Է՛հ, նորէն գրելիք նիւթս կորսնցուցի,  
նոր գրիչս ալ միշտ կը շեղի:

Բայց չէ՛, ի՛նչ որ ալ ըլլայ պիտի գրեմ:

Սկսինք:

Սովորութիւն ունիմ կիրակի առաւօտները  
եկեղեցի երթալ եւ Սրբազանին աթոռին  
էտին կենալ, Տէր Պօղոսին թապախէն խու-  
սափելու համար, եւ մանաւանդ ողջոյնի ա-  
տեն Սրբազանին պատուական Ս. Աջը համ-  
բուրելու արժանի ըլլալու համար:

Ասոնցմէ զատ, Մէհտէրեան էֆէնտի  
հասուցած քաղցրաձայն դպիրներն ականջիս  
քովիկէն լսելու եւ հոգեկան հաճոյք մը վա-  
յելելու համար:

Է՛հ, ծերունիները միտթարուելու պէտք  
ունին, մի՛ մեղադրէք զիս:

Անցեալ կիրակի շեղում մը ունեցայ,  
տեսնելով որ ալա կիօջ քայրօներով, էյֆէլ-  
եան աշտարակի չափ երկար օձիքաւոր, չիք  
հագուած սիգադէմ եւ ակնոցազարդ մու-  
րացկան երիտասարդներ պաշարեր էին գա-  
ւիթին դուռը, ես ալ քովերնին կամացուկ  
մը գացի, կեցայ, խոժու ականարկներ վրաս  
ինկան. մեր մէջ դուն չես վայլեր, ի՛նչ  
գործ ունիս մեր քով, դէ՛հ, կորիբ գնա՛.  
Բերանին չէր ըսեր, աչքերնին կ'ըսէր. չէ  
պիտի կենամ, տեսնամ որ կիները ձեզի կո-  
ղորմի՛ն, անօթի պարոններ, կ'ըսէի միտքէս,  
չէ թէ բերնով այլ աչքով: Մտիկ ըրէ՛ք,  
մտի՛կ, մէյ մ'ալ ի՛նչ տեսնեմ, գեղեցիկ  
սեռէն ամենագեղեցիկ եւ ամենաողորմած  
կին մը, գաւթին դուռնէն դուրս ելած  
պահուն ի՛նչ ընէ աղէկ:

Գլխովը երիտասարդի մը հետս եկուրի  
նշանը չի տա՛յ չարածճի կինը. աման, մար-  
մինս դողալ սկսաւ, միտքս պղտորեցաւ, ես  
ալ պատրաստուիլ սկսայ եւ անմիջապէս  
սկսայ փնտռել գրպանս ու հայելիս հանեցի  
ու մէջը նայեցայ, ի՛նչ տեսնեմ, ճերմակ  
խառնիխուռն մօրուքով մարդ մը . . . Է՛հ,

ծանիր զքեզ, ըսելուս պէս, նորէն առջի  
բարի մարդը եղայ . . .

Չեմ կարծեր որ ալեգարդ կամ ալեներկ  
մարդիկները չիկնին այս տողերէս . . .:

Է՛հ, միջանկեալ խորհրդածութիւն պէտք  
չէ, գրէ՛ Փափազեանս, գրէ՛:

Գօնքօրտիայի թատրոնին առաջ, Բըդի-  
չանի պարտէզին վանդակորմին քովերը սը-  
լըքտացող եւայ տուտուներու միջնորդ մը ե-  
թէ գտնէի՝ անմիջապէս ետեւնուն պիտի  
ղրկէի, բայց որովհետեւ անկարելի էր այս,  
մենք պարտաւորեցանք կամայ ակամայ,  
գիտութեամբ կամ անգիտութեամբ հետե-  
ւիլ իրենց:

Ի՛նչ միամտութիւն, ետեւին անգամ՝ չը  
նայեցան, գացին գացին դուռ մը զարկին,  
երբ դուռը բացուեցաւ իմ գործս լնցաւ,  
բայց բարեբաղդութիւն մը ունեցայ, իմ  
մէկ ազգականիս սպասուհին հոն տեսայ.  
Է՛հ, վա՛ղը, վա՛ղը, կը հասկընամ գործը:

Նոյն գիշերը շատ ուշ լուսցաւ, առտուն  
կանուխ վազեցի դուռը զարկի եւ սպասու-  
հին ազգականիս որպիսութիւնը եւ ինչու  
անկէ ելնելը հարցնելէ ետքը, թեկնածու  
երիտասարդին վրայ բերի խօսքը եւ մե-  
ղադրեցի անբարոյ կնոջ մը քով ծառայելը:  
Խեղճ սպասուհին յուզուեցաւ, ո՛հ, Փա-  
փազեան, մեր տիկինին մեղքը մ'առնէր, շատ  
պատուաւոր կնիկ է, հրեշտակ մ'է, պատ-  
մեմ որ գիտնաս եղածը, ըսաւ:

Ի՛նչ պիտի պատմես, ես աչքիս կը հա-  
ւատամ, ըսի եւ մեկնելու վրայ էի, լսէ  
ետքը գնա, կուգես հաւտա՛, կուգես մի  
հաւտար, կ'ըսէր այնպիսի շեշտով, որ ու-  
զեցի լսել:

Մտիկ ըրէ՛ք:

Տիկինին ծանօթ աղքատ ընտանիք մը  
կար, անցեալները տուներնին փլելու վիճա-  
կին մէջ էր, չիսել տուաւ, վերջերս ալ խա-  
նութը ծախեց անոնց մէկ աղջիկին օժիտը  
տալու համար, եւ ի՛նչ որ պէտք էր ձեռ-  
քովը առաւ:

Սրիկայ մը անոր երթալ գալէն օգուտ  
քաղելով ետեւէն ինկած էր, եւ օր չէր ըլ-  
լար որ տասը անգամ այս տունին առջեւէն  
չանցներ ու ապակիներէն ներս չը նայեր,  
տեսած ատեն աչք կամ խօսք չը նետեր,

տիկինն իսկ համբերութիւնը հատաւ, ուզեց դաս մը տալ ու խաղ մը խաղալ այս աւանակ պարոնին: Բարեկենդանին խոհարարին հնդկահաւ մը առնել տուաւ, անոր եւսեւսովն ալ ամուսինին հետ եւսեւս բռնեց, ինքը շատ դժուար խաբուող մարդ է, կինն մտածեց ու կիրակի օրը եկեղեցի գնաց, երիտասարդը նորէն պքտացեր է, ուստի առիթէն օգտուեր ու հետը բերեր է, ես ալ անկարծակներու եկայ, եւ քիչ մնաց որ պիտի չախէի, եթէ աչք չընեիր ինծի:

Տիկինը հրամայեց ինծի որ օղիի ափսէն պատրաստեմ ու սենեակը տանիմ, հրամանը կատարեցի, ինքը ըսաւ որ դուք հրամանեցէք ես հիմա կուգամ, ու սենեակէն մեկնեցաւ:

Սենեակին մէջի դարանին վարի յարկը նախապէս պարպել տուած էր ինծի եւ ես չէի հասկցած պատճառը:

Մէյ մ'ալ ամուսինը դուռը զարկաւ, տիկինն հետս եկուր ըսաւ ու մտանք հիւրի սենեակը, ա՛հ, ամուսինս եկաւ, շուտ սա դարանը մտիր ըսելով, չիք միւսին, ակնոցը քիթը դժուարաւ օտքերը քաշելով դարանը սղմեցաւ, դուռը վրայէն փակեց եւ բանալին գրպանը դրաւ:

Խնդալէն մարէի պիտի, ափսէն առի ու դուրս ելայ ու փողոցի դուռը բացի, չէք լսեր 2-3 անգամ է որ զարկի, ուր էք, պօռաց ամուսինը, վերն էի ելլն. ըսելով խօսքը կարճ կապեցի:

Ճաշէն ետքը, տիկինը ըսաւ որ սուրճերնիս հոս խմենք, սիրտերնիս բացուի, ու գացին հիւրանոց, սուրճերը տարի հոն, աղաս ըսաւ որ՝ Մարտիրոսին պիտի երթամ, տիկինը պատասխանեց շատ ազէկ, բայց սա մտիկ ըրէ ու անանկ գնա՛:

Ետքէն պատմէ, կրկնեց, ո՛չ մտիկ ըրէ, շատ կարեւոր է, ետքէն, ետքէն կրկնեց նորէն, չերկնցնեմ տիկինը ըսաւ որ ստորուկ երիտասարդ մը ետեւէս ինկած է 10 օրէ ի վեր:

- Ո՛վ է այդ գարշելին.
- Չեմ ճանչնար.
- Չես կրնար ցուցնել.
- Ինչպէս չէ.
- Երբ.

— Հիմա, ա՛ռ սա բանալին, դարանին մէջը տե՛ս:

Բարկութեամբ առաւ թէ չէ տիկինը պօռաց եւսեւս, աղաս բանալին գետին զարկաւ ու դուրս ելաւ, քեզի ալ նալլէթ, ետեւսիդ ալ ըսելով:

Տիկինը մէկ քարով երկու թռչուն զարկած էր, ինծի ալ ըսաւ. առ սա բանալին ու դարանը բաց ու սա յիմարը վռնտէ:

Դարանը բացի չը բացի. օ՛Փ, քիչ մ'ալ անցներ պիտի սատկէի հոս վախէս ու նեղութենէս, մոմալով անանկ մը դուրս նետուեցաւ ու կորսուեցաւ որ չը կրցի պօռալ ու ակնոցը, ձեռնոցները հոս մնաց: Օղը ելած պէիսերը վար կախուեր էր, ինքն ալ ըսես մօմօռ եղէր քարշիմանի տառցեր էր: Եկէր այս խրատէն չօգտուեցաւ նէ, խեղճ գլուխը գալիք չունի:

Եթէ Զլղատեան վարդապետին ալ ասանկ սրամիտ կին մը պատահէր եւ ես հաճոյքը ունենայի բակեղը առնելուս պէս փոխանորդ Սրբազանին տանելու եւ եղբւրիւնը պատմելու:

Այն ատեն ժողովուրդը չէր գայթակղեր եւ վարդապետը բարոյապէս չէր վախճաներ: Եւ եթէ վարդապետի մը թաղման ներկայ ըլլայինք, սա ազօթքին ճամարտութեան վերայ տարակոյս չէինք ունենար:

«Որ պահեցեր զիս անմերձ խառնակութենէ կանանց»:

Արդեօք ասկից վերջն ալ պիտի կարդա՞ն այս ազօթքը:

ՍԱՐԳԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

(Գերձակ)

Կիները իրենց ամէն զարդարանքն արդարացնելու համար մէյմէկ փաստ կը գտնեն. իրենց երեսը կը ճերմկցնեն ալիւրով որպէս զի արեւէն չերի, արդեօք գիշերներն ալ լուսինէն եւ կամ անձրեւոտ օրերն ջուրէ՞ն չերելու համար կը ճերմկնան:

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեծ. Խմբագիր,

Մանչուսկե Պատ. Թերթին 1403 թիւին մէջ կարդացի ե. Մկրտիչեան ստորագրութեամբ զօրլու յօդուած մը, որուն մէջ ըսած էր յօդուածագիրը թէ՛ բարեսէր անձ մը տօնական օրերու առթիւ տասը Օսմ. ոսկի կը նուիրէ թաղին աղքատներուն ածուխ բաշխուելու համար (իրաւ է և ճշմարիտ), խորհուրդը 30 կարօտ ընտանիք կ'որոշէ (կարծես որոշուածներուն մէջ էր ինք) և իր անդամներէն վերոյիշեալ անձը (բարենիշ մը վերոյիշեալ անձը գտնողին) որ թաղին ամենայն ինչն է (խըրսէն է, ձայն մի հանէք) կը պնդէ և կը յաջողի գնման և բաշխման գործողութիւնները իր վրայ առնել (մարդ կայ որ աչք ունի և չի տեսներ, ինչպէս յօդուածագիր պարոնը չ'է տեսեր թաղանդամները, մուխթարը և քէհեան), և որովհետեւ ինք ածխավաճառ ալ է (ինտոր ալ գիտցար . . .) գիւղացիներուն 32 զուրուշի ծախած ածուխը 45ի առած եմ ըսելով կ'սկսի ինք կըշուել և ինք բաշխել ինքնագլուխ (ձեր գլուխը հետ առնել մուցեր է, ներեցէք) արդէն Խորհրդոյ միւս անդամները անկարող ըլլալով (աս քեզմէ չ'էի յուսար, ինչէն գիտես անկարող ըլլալին) ու եւ քննադատութիւն ընելու (տեսա՞ք մի քննադատութեան մօրթուճին) ինք սանձարձակ կը գործէ (քու սանձդ ո՞ւր ձգեցիր) և իր այս զեղծումը պարտկելու համար 30 որոշեալ աղքատներու տեղ 150 հոգիի կը բաժնէ, հոգ չէ թէ ատոնց մէջ ոչ կարօտներ ալ գտնուին, մանաւանդ որ իւրաքանչիւր ընտանիքի 25-26 օխայ բաժին մը կ'իյնայ (դուք ձեր բաժինը նայեցէք) որ և ոչ մէկուն ալ օգուտ

մը կրցած է ունենալ (էյ աֆէրիմ, տեսա՞ք մի բանգէտ մարդը), և ի վերայ այս ամենայնի Խորհուրդը այդ տասը ոսկիէն զատ 250 զրշ ալ պարտական հանելով (գոնէ չիտակ բան մը խօսած ըլլայիր, մարդ Աստուծոյ) ասոնք իրենց տեսակին մէջ ամենէն աններելիներն են (ձեր ըրած խենդ ու խելառ խօսքերուն պէս) և բնական է որ չեն կրնար անտեսուիլ ու կը հրապարակուին (տեսա՞ր մի եղած բանը) հարկաւ նուիրատուն եւս կը լսէ (գուն լսեցիր նէ թող ան ալ լսէ) և սոյն բարեսիրութիւնը փոխանակ իր սրտին սփոփանք մը ըլլալու (հոգ մի ըներ, քեզ նման թեթեւօղիկ չէ) այս անգամ աւելի որտեղութիւն առթելու պատճառ կըլլայ, (քու գրութիւնդ ալ անոր փորհարութեանը պատճառ կըլլայ) եւ արդէն նմանօրինակ արարքները չե՞ն, որոնք օր քան զօր պատճառ կ'ըլլան աղքատասէրներուն թիւը նուազեցնել (քեզ նման մտքով աղքատներուն տեղի տալու համար) :

26 Յունուար 1906

Մաքրիգիւղ

Թօրգաբուի մեր քղրակիցը

Ե. Տ. ԱՆԻՐԷԱՍԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ եկեղեցւոյ Շարականներուն վսեմութիւնը բացայայտ է արդէն, Մեծ Պահքի այս օրերուն մանաւանդ՝ կարելի չէ երեւակայել քրիստոնեայ մը որ փափաք չգգայ, հոգեկան կարօտը յագեցնելու, Արեւագալներով և ուրիշ Շարականներու ընթերցուածներով : Երուանդ էֆ. Տ. Անդրէասեան խնամուած աշխարհաբարի մը վերածած է Շարականները, երկու հատորի մէջ ամփոփելով իր աշխատասիրութիւնը. Ա. հատորին գինն է 2<sup>1</sup>/<sub>2</sub>, Բ. հատորին գինը 3, երկու հատորը մէկէն 7<sup>1</sup>/<sub>2</sub> զրշ. արտասահմանի համար 2 ֆր. գաւառներու համար 9 զրշ. : Կը ծախուի Մոնզուրմի Խմբագրատունը :

ՕՔ.ՆԱՔ

ԼՈՔՔ ՆԱՔ

ՈՏԱՆԱԿՈՔ

Հիւանդանոցի՝ հայ ազգի այս սան  
 Նորոգ մասնուի վերաշինութեան  
 Հիմնադիրքն եղաւ անցեալ ուրաք or  
 Մեծ շրջադարձեալն ու հանդիսաւոր։  
 Կը նախագահէր Պատրիարք Ս. Հայր,  
 Եւրջն ունենալով վարդապետք Տիրայր  
 Յակոբոս, Վարդան ինչպէս եւ Բարգէն  
 Մեկ քանիքն ալ քահանաներէն։  
 Եկեղեցիին՝ նոր կառուցուելիք  
 Լաւ փորուած էին, որոշեալ տեղիք  
 Ուր Ս. Պատրիարք զընել ձեռնարկեց  
 Հիմնադիրքն թիւով տասնեւկէց։  
 Հիմնադիրքն այս նշխարական  
 Խրախանքին վրան գրեալ կան  
 Աւետարանաց եւ առաքելոց  
 Չորս ու տասներկու անուններ արքոց։  
 Տասն եւ վեց անձեր եղան կրթական  
 Ձեռքներին թրուած մէջմէկ հիմնադիր  
 Թախապաշտութեան ազնիւ Կարապետ  
 Կնիսկանքներուն ինքն եղաւ պէս  
 Ձի շինողն եւ եկեղեցիին  
 Իր եղբոր հետ եղբարք երկոյն։  
 Թախապաշտութեան ունէր հիմնադիր  
 Յաննան Պետրոս, առաքել աղար  
 Անդրեասին՝ Տիգրան Մանուկեան  
 Փիլիպպոսին՝ Արթին Ասլանեան  
 Իսկ Լուսաւորչին՝ ուրոյն հիմնադիր  
 Էրեւանեան Գրիգոր՝ անուամբ հաւասար։  
 Բարբողիմէին՝ Տօփթոն Նազարեան  
 Իսկ Յովնանեանին՝ Արիս Ծեման  
 Մասթոսին՝ մեր Մելիստեան  
 Ղուկասինն ալ՝ Նշան Ղուկասեան  
 Դաւով Մարկոսին՝ չէ՛ր Աւետիսեան  
 Ինչպէս Պօղոսին՝ Տեառ Դարամանեան  
 Յակոբոսին՝ Յակոբ Համարմանեան  
 Եւ Քովնասին՝ Խիսապետեան  
 Յակոբոս Արքեան՝ Յակոբոս Ունձեան  
 Եւ Թադեոսին՝ Տօփթոն Զարգանեան  
 Սիմեոնին՝ Դարգին Մերկերեան

Իսկ Մասթեային՝ ծանօթ Այվազեան  
 Ս. Պատրիարք մեր օծելով զս զս  
 Հիմնադիրքն շրջադարձով առաւ  
 Մածկրած իսկոյն, առաւ մի առ մի  
 Ձեռնեց իրենց յաւանդեալ տեղի  
 Աղօթք ու մաղթանք կատարելի վերջ  
 Խօսեցաւ քառոյ ինաստայից պէտք։  
 Օրհնեց յիշատակ մեծ քառարին  
 Պեղծեան ամիրայ եւ Փիշիւղեանին  
 Մաղթանքներ ըրաւ քառարներուն  
 Յիշելով անուան Կիւրակեաններուն  
 Ինչպէս Յակոբեան ինչպէս Ունձեան  
 Թախապաշտութեան երկոյն եղբարք։

X

Երեւոյթի or Տեառնընդառաջի  
 Եկեղեցոյն մէջ Ս. Լուսաւորչի  
 Երգեցողութիւնք տեղի ունեցան  
 Առաջին անգամ ամբողջ եռօրեայն։  
 Բազմութիւնն այնքան խոշորն ու շատ եր  
 Որ դուրս մընային անոնցմէ շատեր։

X

Իզմիրի քաղիին Գորսէլիոյի մէջ  
 Հարսնուկի մը սիրտ ըրաւ ելեւեջ  
 Վասն զի փեսան պրտակի տեսն  
 Կըծիկը դրաւ եկեղեցիին։  
 Այս or տասն or է դեռ մէջտեղ չեղաւ  
 Խեղճ հարսին մընաց քաժին կրկնի զաւ։  
 Թէ կ'ուզես պատճառը, ինձ քե մըսիկ,  
 Չէր յարմար հարսին՝ փեսային տարիք։  
 Տասն եւ ութ դեռ նոր կոխած այս վերջին  
 Կապել ուզեցին ետուն հիմնեցին։  
 Այս լուրը տրուող դեռ երեկ կ'ըսէր  
 Թէ վերջն ըլլայիք առաջն է եղեր։

X

Տ. Սոփիասեան Մեարոյ Սրբազան  
 Որուն կ'երթան դեռ անձինք զանազան  
 Երկնահաւորել յաջող յաջող անոր  
 Ձի երկու հազար ոսկի ճիշդ այսօր  
 Բրեթի Ծոնսիկ Էմբրսիկին  
 Պարգեւն ըստացաւ, իրեն երանի։

Արտեմաշեւ ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ  
 Պապը այի ճառատեմի, քիւ 52



# BOVININE

## ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈԲՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համբաւաւոր բժիշկներէն. Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով:

50—34

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂԾՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց  
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հաւնաւ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկոսութեամբ և գիներու անմիջեղի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց քելըրիներու և տղայոց շիք և դիմացկուն ֆօքսիւններու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ Ներմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—25

## ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՝ ֆլուստկար նիւթերէ բոլորովին զերծ է:



Յիշեալ ջուրը մաշերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձերիտի վեգաի թրպալիյէի միջոցաւ մասնաւոր աղբարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, որ պիտի դըտնէ՛ք մաքուր ջուր ձեր մաշերուն գունաւորման համար:


Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻԼՏ ԹԷՅԵՐ

# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ զոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօյի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հազուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և զոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շարաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելի բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր զոհացնել իր ամենէն զժուարհաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-21

Շարաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։